ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ <<ԱՐԵՎԻԿ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

N 717
<< 20 >> օգոստոս 2026թ.

3104, Գյումրի, Լազոյի 4/1 Հեռ.
094301625

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Գ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն՝ Մանուկյան

Հայտնում եմ Ձեզ, որ <<Արևիկ մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի վերանորոգնող խմբասենյակների անվտանգության համար անհրաժեշտ է պահպանության համակարգ:

Այդ իսկ պատճառով՝ անխափան սնուցման աղբյուրի, 4 հատ շարժման տվիչների և պահպանության համակարգի տեղադրման համար անհրաժեշտ է վճարել 110 000 ՀՀ դրամ:

Տնօրենի ժ-պ՝ Ս.Մելքոնյան

ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու համայնքի մանկապարտեզների միասնական կազմակերպություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության թվային 20.08 2026թ.
մուտքագրման համար 14878

Ծառայությունների մատուցման

Պայմանագիր N ___

ք.Գյումրի «21» օգոստոսի 2026թ

<<Արևիկմանկապարտեզ>> ՀՈԱԿ ք.Գյումրի, Լազոյի 1, ի դեմս տնօրեն ժ/պ Սոնա Մելքոնյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու»՝ մի կողմից, և Ա/Զ Ռոման Զաղոյանը /անձ AU0240456 կոդ տրված 21.04.2021թ 016/ Ա/Զ վկայական 01 Ա 086849 տրված 17.08.2004թ Գյումրու տ/բ կողմից գրանցման համար 03433), այսուհետ՝ «Կատարող» մյուս կողմից. միասին՝ «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալ մասին.

Պայմանագրի առարկան

Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տրամադրել և տեղադրել հակահրդեհային անվտագության տեխնիկական համակարգի սարքավորումներ:
Նայել հավելված 1.

1. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2. Առանց Ծառայության արդյունքի դիմաց վարձատրելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կատարողի կողմից մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի պահանջներին և (կամ) խախտել է Ծառայության մատուցման ժամկետը և Ծառայությունը չի կարող մատուցվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Ծառայության մատուցման ընթացքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.3. Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել սույն պայմանագրի 3.1. կետով նախատեսված գումարները:

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1. Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու մատուցված Ծառայության համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված դեպքի:

2.3.2 Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 10 օր առաջ տեղեկացնելով Պատվիրատուին:

2.3.3 Սույն պայմանագրում նշված ժամկետից շուտ ավարտել և հանձնել Ծառայությունը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Ծառայությունները մատուցել պատշաճ որակով:

2.4.2 Պատվիրատուի պահանջով մեկ օրվա ընթացքում անհատույց վերացնել բոլոր թերությունները:

2.4.3 Տրամադրել 1(մեկ) տարի երաշխիք ազդարարման համակարգերի համար:

2. Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1. Սույն պայմանագրով Կատարողի կողմից մատուցված Ծառայության գինը կազմում է 129800 (հարյուր քսան ինը հազար ութ հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները: Գինը ներառում է նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

3.2. Պատվիրատուն պարտավոր է Կատարողին վճարել 3.1 կետում նշված գումարը Պատվիրատուի կողմից Հանձնման-ընդունման ակտի ստորագրելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

3.3. Ծառայության մատուցման գինը կարող է փոփոխվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

3.4. Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

3. Ծառայության հանձնման և ընդունման կարգը

4.1. Կատարողը Ծառայության մատուցման ավարտից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված Հանձնման-ընդունման ակտի երկու օրինակ:

4.2. Պատվիրատուն սույն պայմանագրի 4.1. կետում նշված փաստաթղթերը ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված Հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.3. Կատարողի մատուցած Ծառայության արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում երկկողմանի Հանձնման-ընդունման ակտի ստորագրելու պահից:

4. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ֆորս-մաժոր)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի

ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5. Եզրափակիչ դրույթներ

6.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2027թ.-ի օգոստոսի 21-ը:

6.2. Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության:

6.3. Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

6.4. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ լրացուցիչ պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

6.5. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

6.6. Սույն պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

Պատվիրատու Շիրակի մարզի, <<Արևիկմանկապարտեզ>> ՀՈԱԿ Հասցեն՝ ՀՀ, Շիրակի մարզ ք.Գյումրի, Լազոյի 1 ՀՎՀՀ՝ 05521255 Բանկ՝«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլբանկ» ՓԲԸ h/h 220065140554000	Կատարող Ա/Ձ Ռոման Զադոյան Հասցե՝ք.Գյումրի Շիրակացի 54/19 ՀՎՀՀ 57239288 h/h 2050132011941001 Բանկ՝«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ-ի Գյումրի մասնաճյուղ
Տնօրեն՝ Ս. Մելքոնյան	Ա/Ձ՝ Ռ. Զադոյան
ստորագրություն Կ.Տ.	ստորագրություն Կ.Տ.

Հավելված 1

Ապրանքների և սպասարկման ցանկ

N	Անվանում, մակնիշ	Տեխնիկական բնութագիր	Չ/Մ	Քանակ	Միավորի գինը ՀՀ դրամ	Ընդամենը ՀՀ դրամ
1	DSC P105H	անվտանգության շարժման տվիչ	հատ	4	8 200	32 800
2	ИВЭПР 12/5 2x7	անխափան սնուցման աղբյուր 12վոլտ 7ամ/ժամ	հատ	1	36 460	36 460
3	ИП 212-154	հակահրդեհային ծխի տվիչ	հատ	3	6 500	19 500
4	КСПВГ 4 х 0,55	մալուխ անվտանգության հակահրդեհային համակարգի	գծ/մ	120	177	21 240
					Ապրանքի գին, Ընդամենը	110 000
5	Մոնտաժ,տեղադրում, ծրագրավորում			1	19800	19 800
					Ընդամենը	129 800

Պատվիրատու
Շիրակի մարզի,
~~<<Արևիկմանկապարտեզ>> ՀՈԱԿ~~
Հասցեն՝ ՀՀ, Շիրակի մարզ
ք.Գյումրի, Լազոյի 1
ՀՎՀՀ՝ 05521255
Բանկ՝«Ակբա-Կրեդիտ
Ագրիկոլբանկ» ՓԲԸ
h/h 220065140554000

Տնօրեն՝ Ս. Մելքոնյան

ստորագրություն

կ.տ.

Կատարող
Ա/Ձ Ռոման Զադոյան
~~Հասցե՝ք.Գյումրի Շիրակացի 54/19~~
ՀՎՀՀ 57239288
h/h 2050132011941001
Բանկ՝«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ-ի
Գյումրի մասնաճյուղ

Ա/Ձ՝ Ռ. Զադոյան

ստորագրություն

կ.տ.

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱԿՏ

24.08.2026թ.

ք.Գյումրի

<<Արևիկմանկապարտեզ>> ՀՈԱԿ- ի, պատվիրատու՝ ի դեմս տնօրենի ժ/պ՝ Սոնա Մելքոնյանի և Կատարողը՝ ի դեմս Ա/Ձ Ռ. Զադոյանի ստորագրում են սույն ակտը հետևյալ մասին.սույն ակտով Կատարողը և Պատվիրատուն հավաստում են, որ համաձայն 21.08.2026թ. <<Արևիկմանկապարտեզ>> ՀՈԱԿ - ի և Ա/Ձ Ռոման Զադոյանի միջև կնքված ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի պատշաճ որակով և սահմանված ժամկետներում, մատուցվել են հետևյալ ծառայությունները

- Պատվիրատուի կողմից պատվիրված հակահրդեհային անվտանգության տեխնիկական համակարգի սարքավորումները տեխնիկական նկարագրին համաձայն կատարվել է լրիվ հավաքակազմով, կարգաբերում և շահագործման հանձնում:
- Համակարգը սարքավորված է Պատվիրատուի եւ գործող նորմատիվային պահանջներին համապատասխան:
- Համակարգը փորձարկվել է: Գործում են նորմալ: Դիտողություններ չկան:
- Համակարգերը շահագործվում են ս/թ օգոստոսի 24-ից:

Վերոհիշյալ ծառայության մատուցման վերաբերյալ հաշիվ-ապրանքագիրը հանդիսանում է սույն Ակտի բաղկացուցիչ մասը:

Պատվիրատու
Շիրակի մարզի,
<<Արևիկմանկապարտեզ>> ՀՈԱԿ
Հասցեն՝ ՀՀ, Շիրակի մարզ
ք.Գյումրի, Լազոյի 1
ՀՎՀՀ՝ 05521255
Բանկ՝«Ակբա-Կրեդիտ
Ագրիկոլբանկ» ՓԲԸ
հ/հ 220065140554000

Տնօրեն՝ Ս. Մելքոնյան

ստորագրություն

Կ.Տ.

Կատարող
Ա/Ձ Ռոման Զադոյան
Հասցե՝ք.Գյումրի Շիրակացի 54/19
ՀՎՀՀ 57239288
հ/հ 2050132011941001
Բանկ՝«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ-ի
Գյումրի մասնաճյուղ

Ա/Ձ՝ Ռ. Զադոյան

ստորագրություն

Կ.Տ.